ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N02

Բյուրեղավանի համայնքի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննող աշխատանքային խմբի (այսուհետ աշխատանքային խումբ) նիստի

«25» ապրիլ 2024թ ք. Բյուրեղավան

Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի վարչական շենքի, 1-ին հարկի թիվ 2 սենյակում, մասնակցությամբ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու աշխատանքային խմբի նախագահ՝ Նորայր Շուշանյանի (Բյուրեղավան համայնքի աշխատակազմի վարչական իրավախախտումների գծով իրականացվող աշխատանքների պատասխանատու), աշխատանքային խմբի անդամներ՝ Վարդյա Հայրապետյանի (Բյուրեղավան համայնքի Բարեկարգում և կանաչապատում ՀՈԱԿ-ի տնօրենի ժ/պ), Անդրանիկ Եղիազարյանի (Բյուրեղավանի համայնքապետարանի քաղաքաշինության հողաշինության գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ) և աշխատանքային խմբի քարտուղար՝ Վարուժան Մարտիրոսյանի (Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ) քննության է առնվում գույքահարկի գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ 21.02.2024 թվականի տեղեկանքի հիման վրա 13.03.2024 թվականին հարուցված վարույթը:

Վարչական վարույթին հարկադրում՝ «Սոնատոն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված էր:

Քննարկվում է Բյուրեղավան համայնքում գտնվող սեփականության վերաբերյալ միասնական գույքահարկի գծով (2021թ.-ից սկսած)՝ 2931991 ՀՀ դրամ, որից՝ 2527167 ապառք 404824 տույժ, և շինության գույքահարկի գծով (մինչև 2021 թվականը) 2555891 որից 1864245 ապառք, 691646 տույժ ընդհանուր՝ 5487882 ՀՀ դրամ հարկային պարտավորությունների հարցը:

Աշխատանքային հանձնաժողովը որոշեց առաջարկություն ներկայացնել համայնքի ղեկավարին ղեկավարվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերով, ՀՀ Հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-61-րդ հոդվածներով «Սունդուն» ՍՊԸ-ից հօգուտ Բյուրեղավան համայնքի բյուջեի գանձել 5487882 ՀՀ դրամ/ապառք՝ 4391412 ՀՀ դրամ, տույժ՝ 1096470 ՀՀ դրամ, որպես Բյուրեղավան համայնքում սեփականության իրավունքով նրան պատկանող անշարժ գույքի /հողամասի և արտադրական շինության/ համար վճարման ենթակա հարկի գումար:

Վարչական իրավախախտումների գործերը քննող աշխատանքային խմբի մասնակից անդամների հետևյալ ձայների բաշխումով Կողմ 3 Դեմ 0 Ձեռնպահ 0

Հայտարարվեց որոշման գանգատարկման կարգն ու ժամկետները:

Նախագահող՝

Ն. Շուշանյան

Աշխատանքային խմբի անդամներ՝

Վ. Հայրապետյան

Ա. Եղիազարյան

Քարտուղար՝

Վ. Մարտիրոսյան